Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
մարտի 19-ի N 286 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը	Կատարման ժամկետները
1	2	3	4
1.	«Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպանության նախարարություն	2014 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ
2.	«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպանության նախարարություն	2014 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ
3.	«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպանության նախարարություն	2014 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ
4.	«Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանս-պորտային միջոցների սահմանային թույլատրելի մակարդակները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 965-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	ծրագրի 1-ին կետով նախատեսված՝ վերանայվող իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում
5.	«Մթնոլորտ արտանետումների կազմի նորմերն ու հսկման մեթոդները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի N 67-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպանության նախարարություն	ծրագրի 1-ին կետով նախատեսված՝ վերանայվող իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում

14_0286

1	2	3	4
6.	«Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1026- Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշ-ման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ծրագրի 2-րդ կետով նախատեսված՝ վերանայվող իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում
7.	«Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 750-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշ-ման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ծրագրի 2-րդ կետով նախատեսված՝ վերանայվող իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո 8-ամսյա ժամկետում
8.	«Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջները սահմանելու, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկն ու հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1277-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ծրագրի 2-րդ կետով նախատեսված՝ վերանայվող իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո 10-ամսյա ժամկետում
9.	«Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պա-հանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ծրագրի 3-րդ կետով նախատեսված՝ վերանայվող իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո 10-ամսյա ժամկետում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ